ԺԷ. դարի սկզբին՝ և ԾԱ. (=1602) թուին յիշւում է «Սահակ եպս Հաւոց Թառիեցի»(1), քիչ յետոյ՝ Շահաբասի արշաւանքի ժամանակ, Հաւուց Թառի առաջնորդն էր Մանուէլ եպիսկոպոս, Մելքիսեդ կաթողիկոսի կուսակիցն ու գործակիցը, որ սպանուեցաւ Դեղարդայ ձորում մի այրի մէջ 1605 թուին(2)։

Հաւանօրէն սորա յաջորդն էր Համազասպ եպիսկոպոս, վանահայր Հաւուց Թառի և առաջնորդ Երևանի, որի օրով 1618 թուին Մեսրոպ Խիզանցին նորոգեց 1214 թուի, Իգնատիոս գրչի ձեռքով գրուած աւետարանը, որ պահւում էր մինչ այդ ժամանակ «ի դուռն Ամենափրկչին եւ է ի ձեռն Համազասպ եպիսկոպոսին»(3)։

Սորա յաջորդն էր Մկրտիչ եպիսկոպոս՝ կուսակից Սահակ կաթուղիկոսի(4)։ Սորա կամ նախորդ Համազասպ եպիսկոպոսի ժամանակակից էր Հաւուց Թառում «ծաղկող» Խաչատուր քահանան(5)

Ապա, ըստ Դաւրիժեցու, Փիլիպոս կաթուղիկոսը վանահայր է նշանակել Սիմէոն Ջուղայեցի գիտնական վարդապետին, միանգամայն և առաջնորդ Երևանի, ուղարկելով «ի վանս նոցա, որ է ի գաւառին Գառնոյ, անուամբ Ամենափրկչին, որ մականուամբ ասեն Հաւուց Թառ»(6)։ Նա Փիլիպոսի աշակերտներից էր և ապա վարդապետ Յոհաննայ վանքում և Էջմիածնում, հեղինակ քերականութեան, տրամաբանութեան և ուրիշ իմաստասիրական աշխատութիւնների(7)։ Դաւրիժեցուց զատ՝ նորա մասին գովասանքով են խօսում և ուրիշ ժամանակակիցներ(1)։ Նա միևնոյն ժամանակ և նկարիչ էր. Ստեփանոս Իլովացին իւր ձեռքով գրած N 1524 ձեռագիրը ծաղկել է տալիս նորան, յիշելով «նաեւ զՍիմէոն շնորհազարդ եւ քաջ բարուն, ծաղկող եւ կազմող սորին»։ Էջմիածնի միաբաններից մէկը՝ Մովսէս «իմաստութեամբ սիրող», 1648 թուին գրել է տալիս Դիոնեսիոս Արիսպագացու աստուածաբանութիւնը, յիշելով «եւ զոսկեգօծ նկարիչ զՍիմէոն վարդապետ»(2)։ Երեւանում 1654 թուին, «եւ վերագիտողութեամբ մերոյ գաւառի տէն Սիմէոնի քաջ բարուն ապետի Ջուղայեցւոյ անյաղթ փիլիսոփայի, որ նստի ի սքանչելի մենաստանն Ամենափրկիչ ի ձորն Գառնոյ», գրուած է Տաթեւացու (?) Հարցմունքը(3)։ Մեր ձեռքն է հասել Սիմէոն Ջուղայեցու մի ոտանաւոր «գրուատ»ը Հաւուց Թառի եկեղեցիների մասին, տարաբաղդաբար աղաւաղուած տգէտ գրչի արտագրութեամբ։ Նա բացի Կարուղիկէ, Ասուածածին և սուրբ Յարութիւն եկեղեցիներից, յիշում է՝

Զանկակատուն որ ի յորջման,
Բարձրագումէթ երկնից նման.
. . . . . .
Սքանչամայտունս ահեղ զարման,
Խարսխէ յարկ հաստատեցան,
Հաստակառոյց ոյժ վիմարդեան
Կարծր վիմանց համայնման
Ծանրագումէդ հիացական։
Ի սքանչ ուխտիս ընդանրական
Ա. սեղան ի սայ եղան.
. . . . . .
Մեծ թագաւոր կայ աննման
Տիպ տերունոյն եւ տիրական,
Փրկիչ քաւիչ եւ աւգնական,

(1) Բանբեր. Գիտ. ինստ. Ա. եւ Բ. 132։

(2) Առաքել Դաւրիժեցի. 1896. 17. 47. 298։ Ձեռ. Էջմ. N 519, 74ա. ընդարձակ յիշատակարան Շահաբասի արշաւանքի, արտագաղթի, նաեւ Մանուէլ Հաւուց Թառի եւ Դեղարդի Աստուածատուր եպիսկոպոսների մասին։

(3) Դաւրիժեցի. 298։ Ալիշան. Այրարատ. 357։

(4) Դաւրիժեցի. 235։

(5) Ձեռ. Էջմ. N 1792 նց։ Ձեռագիրը ժամագիրք է եւ Սաղմոս, գրուած 1628 թուին Ազարիա աբեղայի ձեռքով. յիշատակարանի վերջում աւելացրած է. «զծղկաւղս սորա Խաչատուր քհնյ, որ է երեւանեցի, Հայոց Թռու. ՃԶ շհի ծղկի հախ դվի»։

(6) Դաւրիժեցի. 235։

(7) Ձեռ. Էջմ. N 4064։ Յիշատակարանը հեղինակի ձեռքով գրուած տե՛ս Յաւել. 9։

(1) Զաքարիա Սարկաւագ. 35։ Ձեռ. Էջմիածնի N 1881|1742 (տե՛ս Յաւել. 10). նաեւ N 1858|1827։ Այս ձեռագրի հեղինակն է Սիմէոն երեւանցի կաթողիկոսը, որ Պրոկղի Քարգմանութեան մասին խօսելուց յետոյ աւելացնում է. «Իսկ ի Ռ՚ձերդ թուջն մեր՚՚մ Ջուղայեցի Սիմէոն գերիմաստ վրդպն, որ էր եպիսկոպոս Գառնոյ, վերստին արր սմա զնոր լուծմունս, պրզ ոճով։ Նաեւ սոյնոյ վրդպիս է արրլ զքերականուին եւ զտրամաբանուին ըս լեզուիս Հայոց»։

(2) Ձեռ. Էջմ. N 2503։

(3) Ձեռագրի N չեմ գտնում տարաբաղդաբար։